ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

1.1 Պայմանագրում օգտագործված հասկացություններն ու եզրույթներն ունեն ստորև նշված նշանակությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրում օգտագործված հասկացությունների ու եզրույթների բովանդակությունն այլ իմաստ կպարունակի կամ այլ բան կբխի իրավահարաբերության էությունից:

1.1.1 «**Օֆերտա**» - «ՄՈՒՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կրթական դասընթացների առցանց անցկացման հրապարակային առաջարկ: Պայմանագրում օգտագործվող օֆերտան հասկացվում է որպես հրապարակային օֆերտա, բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրի տեքստից ուղղակիորեն կբխի այլ բան:

1.1.2 «**Կատարող**» - Հրապարակային օֆերտային միացած «Շահառուին» առցանց կրթական ծառայություններ մատուցող «ՄՈՒՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

1.1.3 «**Շահառու**» - օֆերտային միացած և կրթական ծառայություններ ստացող, ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ:

1.1.4 **«Վճարող»** - Օֆերտայի շրջանակներում «Շահառուի» օգտին անհատույց վճարում իրականացնող «Մ.Ա.Մ.» կրթական հիմնադրամ:

1.1.5 «**Կողմ**» - նշանակում է «Շահառու» կամ «Կատարող» կամ «Վճարող», ինչպես կպահանջի համատեքստը:

1.1.6 «**Կողմեր**» - նշանակում է «Շահառուն» և «Կատարողը» և «Վճարողը» միասին, եթե այլ բան չի բխի համատեքստից:

1.1.7 «**ՎԵԲ կայք**» - mam-edu.com՝ համացանցում տեղադրված և «Կատարողին» պատկանող ՎԵԲ կայք:

1.1.8 «**Անձնական տվյալներ**» - «Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի» իմաստով ոչ հանրամատչելի անձնական տվյալներ:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն Պայմանագրի համաձայն Կատարողը պարտավորվում է Շահառուին տրամադրել հատուցելի կրթական ծառայություն՝ առցանց դասընթացների անցկացում, այսուհետ՝ Ծառայություններ: Ծառայությունների արժեքը փոխհատուցվում է Վճարողի կողմից՝ իր կանոնադրությամբ նախատեսված նպատակների և Կատարողի հետ կնքված Համագործակցության հուշագրի շրջանակներում:

2.2. Ծառայություններն ընդգրկում են Կատարողի կողմից ի օգուտ Շահառուների համար առցանց դասընթացների անցկացումը՝ ներառյալ կրթական նյութերի տրամադրումը և առցանց քննարկումների կազմակերպումը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **Կատարողն իրավունք ունի՝**

3.1.1. Առցանց դասընթացներն իրականացնել ինքնուրույն՝ ընտրելով գնահատման համակարգերը, ձևերը, իրականացման կարգը և հաճախականությունը:

3.1.2. Փոփոխել կրթական ծրագիրը, այդ մասին նախապես տեղեկացնելով Շահառուին:

3.1.3. Սահմանել տեխնիկական աջակցման պայմանները, որոնց միջոցով Շահառուն կարող է դիմել ծառայություն ստանալու կամ շարունակելու համար:

3.2. **Կատարողը պարտավոր է՝**

3.2.1. Սույն Պայմանագրի համաձայն կազմակերպել և մատուցել Ծառայությունները՝ ապահովելով Պայմանագրի պայմաններն ու պահանջները:
3.2.2. Ապահովել սույն Պայմանագրի պայմանների համաձայն Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ Վեբ-կայքի անխափան աշխատանքը:
3.2.3. Տրամադրել Շահառուին Վեբ-կայքից և կրթական նյութերց օգտվելու անխափան հասանելիություն:
3.2.4. Տեղեկացնել Շահառուին Վեբ-կայքում նախատեսված տեխնիկական աշխատանքների մասին՝ աշխատանքները սկսելուց առաջ առնվազն 24 ժամ առաջ:
3.2.5. Տրամադրել Շահառուին բոլոր կրթական նյութերը և տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են առցանց դասընթացների արդյունավետ անցկացման համար:
3.3. **Շահառուն իրավունք ունի՝**
3.3.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել անձամբ, ամբողջությամբ, պատշաճ որակով և պայմաններով:
3.3.2. Անհրաժեշտության դեպքում պահանջել տեխնիկական աջակցություն Կատարողի կողմից նշված պայմանների սահմաններում:
3.3.3. Ստանալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները առցանց դասընթացների մասին, այդ թվում՝ դասընթացների անցկացման ժամանակացույցների, պահանջների և գնահատման չափանիշների վերաբերյալ:
3.4. **Շահառուն պարտավոր է՝**
3.4.1. Ընդունել Կատարողի կողմից մատուցված Ծառայությունները՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:
3.4.2. Գրանցվել Վեբ-կայքում և ստեղծել անձնական էջ:
3.4.3. Պահպանել առցանց դասընթացների մասնակցության կանոնները և պատշաճ վարքագիծ:
3.4.4. Ապահովել ինտերնետ կապի և առցանց դասընթացին միանալու և մասնակցելու համար տեխնիկական միջոցների առկայությունը:
3.4.5. Մասնակցել առցանց դասընթացներին և կատարել սույն դասընթացների ընթացքում տրվող հանձնարարությունները պատշաճ և ժամանակին:
3.4.6. Չտարածել Ծառայությունների մատուցման ընթացքում ստացված կրթական նյութերը երրորդ անձանց: Տվյալ պայմանը խախտելու դեպքում Շահառուն պատասխանատվություն է կրում Կատարողի առջև՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկատվության տարածման հետևանքով պատճառված վնասների համար:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. «Պայմանագրի» գինը և/կամ չափը ձևավորվում է դասերի քանակից ելնելով՝ մեկ դասաժամի արժեքը սահմանելով 6480 (վեց հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված և վերաբերելի բոլոր տեսակի հարկերը: Վճարման կարգն ու պայմանները որոշվում են Կատարողի և Վճարողի համաձայնությամբ:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Շահառուի կողմից Օֆերտան ընդունելու և Վճարողի կողմից համապատասխան վճարումը կատարելու պատրաստակամությունը ստանձնելու պահից և գործում է մինչև Կողմերի լրիվ պարտավորությունների կատարումը, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 «Պայմանագիրը» կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
6.2 «Կողմերը» սույնով տալիս են իրենց համաձայնությունը, որ նախքան «Պայմանագրի» «Կողմերից» որևէ մեկի կողմից կատարված խախտման հիմքով պայմանագիրը լուծելու պահանջով դատարան կամ վեճը քննելու իրավասություն ունեցող այլ մարմին դիմելը կապահովեն վեճի լուծման արտադատական՝ նախապահանջային և բանակցային լուծման կարգ՝ ոչ ավելի, քան 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում: Ընդ որում, վեճի արտադատական կարգավորում կարող է համարվել ինչպես սույն պայմանագրի կողմից խախտումն ընդունվելը և/կամ այն վերացնել պարտավորվելը, այնպես էլ խախտումը փաստացի վերացնելը և/կամ վեճի կարգավորման վերաբերյալ «Կողմերի» փոխադարձ համաձայնություն ձեռք բերվելը: «Կողմերը» կաշկանդված չեն դատական կարգով միմյանց ներկայացնելու լրացուցիչ կամ ավել ծավալով պահանջներ, քան արտադատական կարգով ներկայացվել է նախապահանջով:
6.3 «Պայմանագրի» կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: «Կողմերի» միջև վեճերի շուրջ «Պայմանագրի» 6.2. կետով սահմանված արտադատական կարգավորման ժամկետում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ «Կողմերը» սույնով համաձայնվում են, որ վեճերը ենթակա են լուծման դատական կարգով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 «Պայմանագրով» սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար «Կողմերն» ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է «Պայմանագիրը» կնքելուց հետո, և որը «Կողմերը» չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
7.2 Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմներն, այդ թվում՝ քաղաքացիական, համաճարակը, վթարները և այն իրավիճակները, որոնք չեն կարող վերահսկվել «Կողմերի» կողմից և անհնարին են դարձնում «Պայմանագրով» սահմանված պարտավորությունների մասնակի կամ ամբողջական կատարումը:
7.3 Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով «Պայմանագրով» սահմանված պարտավորությունները չկատարող «Կողմը» պարտավոր է անմիջապես, իսկ դրա անհնարինության դեպքում ողջամիտ ժամկետում մյուս «Կողմին» ծանուցել անհաղթահարելի ուժի առկայության վերաբերյալ և որպես հետևանք՝ պարտավորությունները չկատարելու մասին: Ծանուցումը պետք է պարունակի՝
7.3.1 Անհաղթահարելի ուժի ծագման պահը՝ տարի, ամիս, օր, ժամ:
7.3.2 Անհաղթահարելի ուժի բնույթը:
7.3.3 Տեղեկություն անհաղթահարելի ուժի և պարտավորությունների չկատարման պատճառահետևանքային կապի վերաբերյալ:
7.4 «Պայմանագրով» նախատեսված կարգով և ձևով չտեղեկացնելը կամ անմիջապես, իսկ դրա անհնարինության դեպքում ողջամիտ ժամկետից ուշ տեղեկացնելը, համապատասխան «Կողմին» զրկում է Պայմանագրի 7.1 և 7.2 կետերում նշված հանգամանքները որպես պատասխանատվությունից ազատելու հիմքեր վկայակոչելու հնարավորությունից:
Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա «Կողմերից» յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել «Պայմանագիրը»՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս «Կողմին»: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով «Պայմանագիրը» լուծվում է, ապա «Պրինցիպալը» պարտավորվում է «Գործակալին» վճարել մինչև «Պայմանագրի» լուծումը իրականացված աշխատանքների դիմաց:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 «Կողմերի» կողմից «Պայմանագրով» սահմանված ժամկետների, պայմանների կամ պարտավորությունների խախտման կամ չկատարման համար «Պայմանագրով» նախատեսված տուգանքները չեն կարող սահմանափակել վնասի դեպքում հայց կամ պահանջ ներկայացնելու «Կողմի» իրավունքը, որի օգտին վճարվում են տուգանքները, եթե նախատեսված տուգանքները չեն ծածկում այդ «Կողմին» փաստացի պատճառված վնասի ամբողջ գումարը, ինչպես նաև տուգանքի և փաստացի պատճառված վնասի գումարների տարբերության դեպքում փոխհատուցում ստանալու պահանջի իրավունքը:

8.2 «Պայմանագրում» ամրագրված է «Կողմերի» ամբողջական համաձայնությունը, և «Պայմանագրով» չամրագրված «Կողմերի» միջև ցանկացած գրավոր կամ բանավոր համաձայնություն, երաշխիք՝ իրավաբանական ուժ չունի և առոչինչ է, եթե ներկայացված չէ գրավոր ձևով:

8.3 «Պայմանագրի» բովանդակությունը բավարարում է «Կողմերի» պահանջներին:

8.4 Յուրաքանչյուր «Կողմ» պարտավորվում է կատարել մյուս կողմից հայցվող հիմնավորված/ պատճառաբանված քայլերը՝ «Պայմանագրի» առարկայում նշված «Կողմերի» մտադրությունների իրականացման նպատակով:

8.5 Եթե «Պայմանագրի» որևէ դրույթ ճանաչվում է անվավեր, ապա այդպիսի անվավերությունը չի ազդում «Պայմանագրի» որևէ այլ դրույթի վավերականության վրա:

8.6 «Պայմանագրի» և դրա կետերի վերնագրերը զետեղված են միայն հղումների մատչելիության համար և չպետք է օգտագործվեն «Պայմանագրի» բովանդակությունը սահմանելու կամ մեկնաբանելու համար:

8.7 Պայմանագիրը Համարվում է Ակցեպտավորված այն պահից, երբ Շահառուն Վեբ-կայքի միջոցով ծանոթանում է Պայմանագրին և համապատասխան վայրում տեղադրելով “V” նշանը հաստատում է պայմանագիրը: Մանրամասն տեղեկությունները զետեղված են Վեբ-կայքի օգտագործման պայմաններում: Շահառուն, միանալով սույն Պայմանագրի, հավաստիացնում է, որ ծանոթացել է Վեբ-կայքի օգտագործման պայմաններին, իր համար հասկանալի են և ընդունում է դրան ամբողջությամբ:

Հաստատված է «ՄՈՒՆՔ» ՍՊԸ-ի
Տնօրենի կողմից